եայի բաժանման տեղ»ը կոչուած բլուր մը ցոյց կու տան այդ կողմի գիւղացիները (Tent work in Palestine, Բ. հատ. էջ 223–224, Conder)։

Արմաւենի ծառը սուրբ ընտանիքին Եգիպտոս փախչելու ժամանակ. — *Ս. ընտանիքը Բեթղեհէմ–Բեբրոնի հարաւ–արևմտեան տաժանելի ճամբով չորս օրէն Գազա հասաւ՝ ըստ աւանդութեան (Աւետարան Ծնունդեան, Ի.Ա.), և անկէ ալ դիւրութեամբ գնաց Եգիպտոսի սահմանը՝ էլ–Արիշ։ Այս էր Եգիպտոս փախչելու ճանապարհը, ոչ թէ Մեռեալ ծովու հարաւային ճանապարհը, որ պիտի ըլլար երկար և տաժանելի։*

Գազայի և էլ–Արիշի ճամբորդութեան միջոցին սուրբ ընտանիքին հետևեալը պատահեցաւ, ինչպէս կը պատմէ անվաւեր Ծնունդեան Աւետարանը։ Ճամբորդութեան երրորդ օրն էր, Ս. Կոյսը շատ յոգնած էր և արևը խիստ տաք. մեծ անապատէ մը անցած միջոցին արմաւենի մը տեսաւ ան. երբ ծառին մօտ հասան, Յովսէփ իջեցուց զայն էշէն։ Ս. Կոյսը վեր նայելով տեսաւ որ ծառը զարդարուած էր գեղեցիկ պըտուղներով և ըսաւ Յովսէփին. կ'ուզեմ ուտել այս ծառին պտուղէն. Յովսէփ պատասխանեց. կը զարմանամ թէ ի՛նչպէս պիտի ուտէք ասոնցմէ։ Նոյն միջոցին Յիսուս որ կաթ կը ծծէր մօրը գիրկը, ըսաւ արմաւենիին որ ծռի և թոյլ տայ իր մօրը ուտելու իր պտուղէն, որչափ որ ուզէ։ Ասկէ անմիջապէս վերջ, հնազանդեցաւ արմաւենին և Ս. Կոյսը յագենալու աստիճան կերաւ, ու ծառը տակաւին հակած կը մնար դէպի անոր. երբ տեսաւ Յիսուս ասիկա՝ ըսաւ. ո՛վ արմաւենի, շիտակ կեցիր. ու ծառը շտկուեցաւ (Աւ. Ծնունդ. Ի.), (տե՛ս De Beth. à Naz. *էջ* 284)։